ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № ԼՄԼԲՀ-ՄԱԾՁԲ-24/01

ք. Երևան « 01» մարտի 2024թ.

«ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Արայիկ Ներսիսյանի, որը գործում է Տեղական ինքնակառավարման մասին օրենքի հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Առավոտ» օրաթերթ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գարիկ Մելքոնյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է հայտարարությունների տպագրության և հրապարակման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների։

1.2 Սույն Պայմանագրի գործողությունը տարածվում է կողմերի միջև «1 » մարտի 2024թ.-ից առաջացած հարաբերությունների վրա:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն՝ չընդունել ծառայությունը՝ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը։ Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը։

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին թերությունները շտկելու համար։

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.2 կետով նախատեսված տույժը։

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.2 կետով նախատեսված տույժը։

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը։

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ։ Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը։

3.3 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված։

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության 1սմ² գինը կազմում է 150/Մեկ հարյուր հիսուն/ՀՀ դրամներառյալ ԱԱՀ-ն, ընդ որում յուրաքանչյուր աշխատանքից հետո ընդհումման և հանձնման ակտի հիման վրա հաշվարկվում է յուրաքանչյուր հայտարարության գումարը համաձայն սահմանված միավորի գումարի: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ հանձման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո 7 բանկային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 % չափով:

5.3 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.4 Տույժերի վճարումը Պատվիրատուին չի ազատում իր պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

6.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է սույն պայմանագրի № 1 հավելվածով սահմանված ժամկետով:

6.2Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

6.3 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելո ւդեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

6.4 Սույն պայմանագիրը կազմվածէ 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

6.5 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿԱՏԱՐՈՂ	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ԱՌԱՎՈՏ» օրաթերթ ՍՊԸ	Լոռի Բերդի համայնքապետարան
ք.Երևան, Արշակունյաց 4, 15-րդ հարկ	ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ Աշոտ Երկաթ 1-ին նրբ. շ.2
Արարատբանկ	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 1510032454880300	Հ/Հ 900252144028
ՀՎՀՀ 02509022	ՀՎՀՀ 06954163
Տնօրեն——————— Գ. Մելքոնյան	Համայնքի ղեկավար——————— NERSISYAN ARAYIK 1201680395 Digitally signed by NERSISYAN ARAYIK

Digitally signed by MELKONYAN GARIK 3111780554
Date: 2024.03.04 10:01:19 AMT